Շղթայակիր պտրք. մարմարեայ յիշատակարան մը չինել տուած է մասնաւոր արձանագրութեամբ (տե՛ս Գրի. պտրք. Շղթայակիր).

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻ.— 1701 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եւ կը թնայ մէկ տարի. ՄՁ. Թ. 1238, Նարեկի մը պահպանակին վրայ գրած է հետեւեալ ինքնագիր յիշատակարանը. «ես անարժան յԱմթեցի Մարտիրոս անուամբ և եթ կոչեցեալ պիտակ և լոկ վրդ.ս եկի յերսղմ. և Ա. տարի կացի, թվին ՌՃԾ» (=1701): (Խաչ. Ցուց. տետր իբ էջ 2173):

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԲԱՂԻՇԵՑԻ.— Մբ. ՏՀ. (1735-1737). կը յիշատակուի Ստամպոլցի Կարապետի որդի Աստուածատուրի կողմէ տպագրուած Մաշտոցի մը ձեռագիր յիշատակարանին մէջ. վախճանած է 1759ին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԲԱՍԵՆՑԻ.—Մբ. կը միաբանակցէր 1857ին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԹՕԴԱՏՑԻ.—Մբ. փոխանորդ. կը վախճանի 1800 ին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԿԵՍԱՐԱՑԻ.—Մբ. կը միաբանակցէր 1862 թուին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՀԱԼԷՊՑԻ.—Մբ. կը միաբանակցէր Գրի. պտրք.ի Շղթայակիրի օրով, ունի թանկարժէք յիշատակներ Ս. Յակոբի գանձատան մէջ (ՄՁ. Թ. 532):

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ԴՐԻՄՑԻ.—Մբ. կը միաբանակցէր 1793ին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՄԺՆԿԵՐՏՑԻ (Զարսանձաց).— Մբ. կնիքը 1849. ՏԲ.

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՄՇԵՑԻ.—Մբ. Զռ. 1692ին Համթեցի Մինաս պտրք.է Ս. Յակոբի մէջ, կը յիշատակուի նոյնին Օրագրութեան մէջ, մինչև 1701: Վանցի Աղայամիրի որդի տէր Խաչատուրին խնդրանքով Բեթղեհէմի մէջ ՌՃԾ (= 1701) թուին, կ'ընդօրինակէ Նարեկացիին Աղօթագիրքը, (ՄՁ. Թ. 698):

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՊԵՏՐՈՍՈՎ.—Այլ անուամբ Սարգիս Վարդապետեան Կարնեցի, Մբ. կը յիշատակուի 1854—1861 թուականներուն:

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՊԻԼՊԻԼ.—Մբ. 1793ին կը միաբանակցէր Բեթղեհէմի մէջ: